ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 1918-1920 թթ.

ՎԻՐԱԲՅԱՆ Վ. Հ.

Հայկական բանակը ստեղծվում էր աննկարագրելի ծանր պայմաններում: Հայաստանի անկախության հռչակման պահին զորքը կազմված էր առանձին Հայկական կորպուսից և կորպուսի իրավունքներ ունեցող Հատուկ ջոկատից: Ռազմական նախարարության կազմավորումը սկսվեց 1918 թ. հունիսի 15-ին, և միայն դրանից հետո որոշ ռազմաքաղաքական պատկերացումների իրականացումը սկսեց միս ու արյուն դառնալ:

ՀՀ կառավարությունը և խորհրդարանը որոշակիորեն ձգտում էին ներդաշնակել իրենց գործողությունները ռազմական շինարարության բնագավառում՝ փորձելով արագորեն լուծել կուտակված խնդիրները, լավ հասկանալով, որ ամեն մի լուրջ երկրի համար բանակը և զինվորական նախարարությունն առաջնային կառույցներ են, ուժային լուրջ լծակներ, առանց որոնց հնարավոր չէ լուծել թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության որևիցե լուրջ հարց, այդ թվում՝ ունենալ արդյունավետ գործող անվտանգության համակարգ: Այս առումով հետաքրքիր է Նախարարների խորհրդի 1918 թ. օգոստոսի 8-ի միացյալ նիստը խորհրդարանի պատգամավորական խմբի հետ, որին ներկա էին պառլամենտի նախագահ Ս. Սահակյանը, պատգամավորներ Հ. Տեր-Հակոբյանը, Ա. Խոնդկարյանը, Հ. Ազատյանը, Մխիթարյանը, Ա. Խաչատուրյանը և այլք, ինչպես նաև ֆինանսների, զինվորական, արդարադատության նախարարները: Այդ նիստում լսվում է Հայաստանի խորհրդի (պառլամենտի) անդամների առաջարկը՝ խորհրդի անդամներից հատուկ մարմին ստեղծելու մասին, որը կառավարության հետ համատեղ պետք է ընտրեր ու լուծեր զինվորական գերատեսչությանը և արտաքին քաղաքականությանը վերաբերող կարևորագույն հարցերը: Միացյալ նիստը որոշում է խորհրդի անդամներից, վերջինիս ընտրությամբ կազմել երկու հանձնաժողով՝ կառավարության հետ համատեղ զինվորական և արտաքին քաղաքականության կարևորագույն հարցերը վճռելու համար: Ընդունված որոշման մեջ կարևորագույն հարցեր են ճանաչվում. 1) Հայաստանի Խորհրդի կողմից օրենսդրական ճանապարհով քննարկման ենթակա հարցերը, 2) այն հարցերը, որոնք կարևորագույն կճանաչվեն զինվորական և արտաքին գործերի մինիստրությունների կողմից[1]:

Թե՛ կառավարությունը, թե՛ պառլամենտը բազմիցս անդրադարձել են զինվորական բնույթի հարցերին, քանզի միշտ էլ ռազմական շինարարության հարցերը լուրջ կռվան են դիտվել ինչպես երկրի ապագայի, ներքին ու արտաքին լիարժեք քաղաքականության կենսագործման, այնպես էլ անվտանգության ապահովման տեսանկյունից: Այսպես, 1918 թ. նոյեմբերի 20-ին ՀՀ պառլամենտի զինվորական

[1] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), Ֆ.Պ-202, ց. 1, գ. 13, թ. 4:

հանձնաժողովը ներկայացնում է օրինագիծ՝ Հայաստանի ազատագրության կռիվներում զոհված զինվորականների զավակներին ձրի դպրոցական պիտույքներ մատակարարելու մասին[2]: 1919 թ. հոկտեմբերի 21-ին զինվորական հանձնաժողովը տալիս է իր եզրակացությունը Շարուր-Նախիջևանի շրջանում հայկական զորքերի անհաջողությունների պատճառների վերաբերյալ և առաջարկում ընտրել այդ դեպքերը քննող հանձնաժողով[3]:

Բանակի նկատմամբ կար որոշակի ուշադրություն, և դա հստակ երևում է կառավարության ու քաղաքական-կուսակցական ուժերի գործունեության վերլուծությունից: Հայկական բանակը 1918-1920 թթ. ստեղծվում էր և ապրում կայացման ոչ միանշանակ գործընթացներ: Ռազմական մի տեղեկագրի համաձայն՝ զինվորական ծառայության մեջ գտնվողների թիվը 1919 թ. գարնանը մինչև 16 հազար մարդ էր[4], իսկ Հ. Քաջազնունու հուշագրի տվյալներով 1920 թ. հուլիսի վերջերին հայկական զորքերի ընդհանուր թիվը հասնում էր 18 հազարի: Այնտեղ նաև նշվում էր զենքի, հագուստեղենի և այլնի պակասության մասին[5]: Համադրենք մի շարք տվյալներ ևս՝ պարզելու իրերի իրական պատկերը: Կ. Սասունու տվյալներով 1920 թ. հայ-թուրքական պատերազմի նախօրյակին հայկական բանակի թվակազմը հասնում էր 35 հազար մարդու[6]: 1920 թ. նոյեմբերի վերջերին զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի ներկայացրած մի տեղեկագրի համաձայն՝ հայկական բանակի զինվորների և սպաների քանակն օժանդակ կազմով հանդերձ հասնում էր 34 հազարի, իսկ խմբերի հետ միասին՝ 40 հազարի[7]: Հայաստանի պառլամենտի անդամ Հ. Տեր-Հակոբյանի տվյալներով Հայաստանի բանակի ընդհանուր թիվը 1920 թ. հոկտեմբերին հասնում էր 55 հազարի[8]: Համադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ այս թվական տվյալների մի մասը, որ բերվում է ժամանակակիցների և ոչ ժամանակակիցների կողմից, ըստ էության, անիրական է: Այս ուռճացված թվական տվյալներն առավել ևս անընդունելի են, երբ ակնհայտ է դառնում, որ հայկական բանակը 1920 թ. պատերազմում գրեթե առանց լուրջ դիմադրության պարտվել է իրեն էապես չգերազանցող թուրքական բանակին: Այն, որ 1918-1920 թթ. հայկական բանակի ընդհանուր թվաքանակից մարտունակ էր ընդամենը 16-18 հազարը, հաստատում է նաև Ս. Վրացյանը՝ 1919 թ. մայիսի 18-ին դաշնակցության Ամերիկայի կոմիտեին հասցեագրած նամակում, առ այն, որ «մոտ 16-17 հազարանոց բանակը կարգապահ է և քաջ»[9]: Այնուհետև նա ավելացնում է, որ աշխատել են ստեղծել նոր զորամասեր, ինչը կարելի է տեղավորել 40-50 հազարանոց բանակի ստեղծման երազանքի ու գոյություն ունեցած լինելու պատկերացումների շրջանակներում: Հարկ է նաև

---

[2] Նույն տեղում, գ. 41, թ. 82:
[3] Նույն տեղում, թ. 73:
[4] Նույն տեղում, Ֆ.Պ- 276, ց. 1, գ. 79, թ. 48:
[5] Նույն տեղում, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 498, թ. 32:
[6] **Սասունի Կ.,** Հայ-թուրքական պատերազմը (Հայրենիք, Բոստոն, 1926, N 11-12, էջ 112):
[7] **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 514:
[8] **Տեր-Հակոբյան Հ.,** Հայաստանի վերջին աղետը, Կ.Պոլիս, 1921, էջ 88:
[9] **Վրացյան Ս.,** Հին թղթեր նոր պատմության համար, Բեյրութ, 1962, էջ 288:

ավելացնել, որ մի այլ կապակցությամբ Ս. Վրացյանն ավելի է մանրամասնում իր ասելիքը հայկական բանակի թվակազմի և որակական հատկանիշների վերաբերյալ: Իր «Կեանքի ուղիներով» հուշաշարքում նա ընդգծում է, որ 1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսված թուրք-հայկական պատերազմի նախօրյակին Հայաստանի Հանրապետությունը «հազիւ 20 հազար կանոնաւոր զօրք ուներ՝ երկրի բոլոր սահմանները պաշտպանելու եւ ներքին կարգ ապահովելու համար: Այդ զօրքի մէկ մասը հին, տասը տարուց աւելի զէնքի տակ էր, յոգնած ու տկարացած, միւս մասը նորակոչիկներ էին, պատերազմի անվարժ, մի մասն էլ անկանոն զօրամասեր՝ խմբապետների հրամանատարութեան տակ»[10]: Իսկ արդեն իր հիմնարար աշխատանքում՝ «Հայաստանի Հանրապետություն» գրքում, Ս. Վրացյանը ճշգրտելով իր իսկ կողմից տարբեր առիթներով բերված փաստական տվյալները, նշում է, որ թուրք-հայկական պատերազմի ժամանակ հայկական բանակի ընդհանուր թիվը հասնում էր շուրջ 40 հազարի, որից 25-26 հազարը կանոնավոր բանակի զորամասեր էին, իսկ արդեն մոտ 10-12 հազարը՝ կամավոր աշխարհազորայիններ[11]: Ասվածից ակնհայտ է դառնում, որ բանակի ստեղծումը դժվարին գործ էր, և արդյունքներն էլ գոհացուցիչ չէին: Ստորև բերվող վկայությունը ևս նպաստում է հայկական բանակի թվաքանակի վերաբերյալ պատկերացումների ամբողջականացմանը և հնարավորություն է տալիս հանգել ավելի ճշգրիտ եզրակացությունների: Ալ. Խատիսյանը, 1919 թ. մարտի 14-ին Լեոյին ուղղած նամակում պատմելով նախօրյակին կայացած կառավարության նիստի մասին, որին մասնակցել էին գեներալներ Մ. Սիլիկյանը և Չումարովը, Երևանյան ջոկատի հրամանատար Դրոն և ուրիշներ, ընդգծում է բանակի անմխիթար վիճակը՝ բերելով նաև փաստեր՝ հայկական բանակի թվակազմի վերաբերյալ: Նա գրում է, որ զինվորները սոված են, գտնվում են հակասանիտարական պայմաններում, 50 տոկոսով հյուծված են տիֆից, իսկ ֆիզիկապես շատ թույլ են: Զինվորները հագուստ չունեն: Նրանց թիվը հասնում է 31-32 հազարի՝ ունենալով մոտ 900 սպաներ: Գեներալ Մ. Սիլիկյանը, այդ նիստին ելույթ ունենալով, շեշտում է, որ ինքը մինչև ապրիլի 1-ը պետք է իր ձեռքի տակ ունենա 16 հազար զինվոր՝ հակառակ դեպքում Հայաստանը ոչնչացված է: Այդ նպատակով էլ որոշվում է. 1) խնդրել անգլիացիներին՝ իրենց ջոկատները դնել Քարվանսարայում, Ալեքսանդրապոլում, Իգդիրում և Քուլպում, 2) խնդրել նրանց՝ տալ հաց, հագուստ և սապոգներ Թիֆլիսից, 3) խնդրել Վրաստանին՝ վերադարձնել Հայկական կորպուսի ունեցվածքը, 4) խնդրել գեներալ Բիչին՝ այստեղ ուղարկել Հայաստանին անհրաժեշտ բոլոր բեռները (ցորեն, հաց, Թիֆլիսից ապրանքներ)[12]:

Հայոց բանակի իրական թվաքանակի ճշգրտմանը նպաստում է նաև ֆրանսերեն մի կարևոր փաստաթուղթ: Դրա հեղինակներն ամենայն հավանականությամբ Անդրկովկասում գործած ֆրանսիական ռազմական ներկայա-

---

[10] **Վրացեան Ս.,** Կեանքի ուղիներով, Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ, Հ. Ե., Բէյրութ, 1966, էջ 171:

[11] **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 477:

[12] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 276, ց. 1, գ. 116, թ. 36:

ցուցիչներն են, որոնք հետախուզական նպատակներով ստույգ տվյալներ են հավաքել հայկական բանակի թվակազմի մասին: Ըստ այդ տվյալների, հայկական բանակի՝ ռազմաճակատային խնդիրներին պիտանի զինվորների թիվը 1920 թ. հասնում էր 24.715 մարդու, սպաներինը՝ 1515-ի, վարչական սպաներինը՝ 309-ի, կամավորներինը՝ 4023 մարդու և այլն[13]: Մատնանշելով այս և այլ նմանատիպ փաստեր՝ հեղինակները մեծ մասամբ չեն փորձում խորանալ փաստերի մեջ և հանգել լուրջ եզրակացությունների, կարծես անտեսելով, որ դրանք հաճախ իրականությանը չհամապատասխանող թղթային տվյալներ են: Հանրագումարի բերելով փաստական տարաբնույթ տվյալները հայկական բանակի վերաբերյալ՝ կարելի է եզրակացնել, որ 55 հազարանոց բանակի վերաբերյալ վկայությունը ժխտվում է, քանզի այն միանգամայն հիմնազուրկ է, իսկ 40 հազարանոց բանակի մասին փաստարկումները կարելի է ընդունել լուրջ վերապահումներով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարբեր հեղինակներ հայկական բանակի ընդհանուր թվակազմից գործող կանոնավոր բանակի ռազմաճակատային կարիքների համար պիտանի թվակազմը տեղավորում են 24-25 հազարի շրջանակներում, որից իրապես մարտունակ կարելի էր համարել միայն 16-18 հազարը, ինչի մասին էլ վկայում են հայկական բանակի բարձրագույն սպայակույտի և կառավարության ներկայացուցիչները: Վերջապես, մոտ 40 հազարանոց թվաքանակ կարող է ստացվել, եթե այդ 20-25 հազարին հավելենք 10-12 հազարից ավելի աշխարհազորայիններին և կամավորներին: Ակնհայտ է, որ 1918-1920 թթ. Առաջին հանրապետության կառավարությունը, կառավարող քաղաքական կուսակցությունը և զինվորականությունը գուցե և ձգտում էին իրականացնել ընդհանուր երազանքը՝ ունենալ մեծ և մարտունակ ուժեղ բանակ՝ այն տեղավորելով շուրջ 40 հազարանոց բանակի մասին պատկերացումների շրջանակներում: Սակայն 1919 թ. տվյալներով 961,7 հազար բնակչություն ունեցող երկրի համար դա բավական դժվար իրագործելի խնդիր էր[14], առավել ևս, որ նույն թվականի դեկտեմբերի վերջի տվյալներով երկրում զինակոչից խուսափող նորակոչիկների ու զինապարտների թիվը 17.665 էր[15]:

Այս բոլորով հանդերձ՝ ակնհայտ է, որ 1918-1920 թթ. ընթացել են լուրջ բանակաշինական գործընթացներ, և այդ առումով թե՛ ՀՀ կառավարությունը, թե՛ պառլամենտը և թե՛ զինվորական իշխանությունները տվյալ բնագավառում ծավալել են բազմաբնույթ աշխատանքներ՝ դրանք նպատակամղելով բանակի կազմակերպմանը, դրա թվաքանակի մեծացմանը, նոր սպայական և այլ կադրերի պատրաստմանը: 1920 թ. հունվարի 28-ին Նախարարների խորհուրդը լսում է զինվորական նախարարի զեկուցումը «Գեներալնի շտաբի սպայական կուրսեր և նախապատրաստական ուսումնարան բանալու և այդ նպատակով 1.828.412 ռուբլու վարկ բաց անելու» մասին հարցը և դրական լուծում տալիս դրան[16]:

---

[13] Նույն տեղում, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 160, թ. 2:
[14] Հայկական Հարց, Ե., 1996, էջ 212:
[15] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 199, ց. 1, գ. 29ա թ. 348:
[16] Նույն տեղում, Ֆ.Պ- գ. 146, մաս I, թ. 19:

Հայկական այդ բանակն աշխատում էր դառնալ գործուն համակարգ, ձևավորել համապատասխան կառույցները, ձեռք բերել զենք ու հանդերձանք, հայթայթել պարեն և այլն: 1920 թ. հուլիսին վերաբերող մի տեղեկագրում նշվում է. «Հարավային Ռուսաստանի զինված ուժերի հրամանատարությունը տրամադրել է մեզ 3.000.000 փամփուշտ: Կառավարությունն այդ փամփուշտների կեսը զիջել է Վրաստանին, մնացածը (մեկ ու կես միլիոն) ամսո սկզբին ստացել է Երևանը»[17]: Ալ. Խատիսյանի վկայությամբ 1920 թ. զենքով և հանդերձանքով հայկական բանակին Անգլիայի ցուցաբերած օգնության ընդհանուր գումարը կազմել է 1 միլիոն 200 հազար անգլիական ֆունտ ստեռլինգ[18]:

Հայկական բանակի կայացման և ռազմական շինարարության հարցերի լուսաբանման տեսանկյունից հետաքրքրական են այն փաստաթղթերը, որոնցում շոշափվում են բանակաստեղծ գործընթացներին վերաբերող խնդիրներ: Այս առումով արժեքավոր է զինվորական նախարարի պարտականությունները ժամանակավորապես կատարող Դրոյի զեկույցը Նախարարների խորհրդում 1919 թ. հունիսի 9-ին: Նշելով, որ Ք. Արարատովի, Մ. Սիլիկյանի և իր գլխավորած զորամասերն ինչ-որ չափով ամրապնդվել են, նա ավելացնում էր, որ զորքերի վիճակը բավական տխուր է, քանզի գրեթե լիովին բացակայում են զինվորական հանդերձանքը և կոշկեղենը, ժամանակին չի տրվում հաց ու այլ պարենամթերք, իսկ զինվորները, գտնվելով մշտական արշավանքների և առաջխաղացումների մեջ, կիսահոգնած են, հակասանիտարական պայմաններում, իսկ բարձրաբերձ վայրերում (Իգդիրի և Կարսի շրջաններ) նեղվում են ցրտից: Բանակը գնում է դեպի քայքայում, տարածվել է դասալքությունը, ինչպես նաև զենքի ու զինվորական հանդերձանքի և պետական այլ ունեցվածքի հանցագործ վաճառքը և այլն: Այնուհետև Դրոն նշում էր, որ հանդերձանքի բացակայության հետևանքով հուլիսին Իգդիրի լազարեթում բուժվել է մոտ 20 հիվանդ՝ թոքերի բորբոքումով: Դրոն նաև փաստում էր, որ զինվորները հաճախ արդարացիորեն բողոքում են, որ միջոցներ չեն ձեռնարկվում այն զինապարտ քաղաքացիներին զորակոչի ենթարկելու առումով, ովքեր այս կամ այն պատըրվակով աշխատանքի են տեղավորվել զանազան հաստատություններում և դրանով իսկ խուսափել զինվորական պարտականությունների կատարումից: Դրոն հայկական բանակի մարտունակության բարձրացման համար առաջարկում էր հետևյալը. 1) առանց հապաղման զորամասերին և զինվորական հաստատություններին ապահովել ֆինանսական միջոցներով, 2) առաջին իսկ հնարավորության դեպքում զորքերն ապահովել ալյուրի բավարար պաշարով՝ մինչև նոր բերքահավաքը, 3) պարենավորման նախարարությանը հրահանգել դիմելու քաղաքային ինքնավարություններին՝ զորքերի համար հայթայթելու սպիտակեղեն, հանդերձանք և կոշկեղեն: Միաժամանակ, կարգադրել Համբարակապետությանը՝ այդ նույն նպատակի համար բաց թողնել բավարար չափով գումար, 4) բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկել

[17] Նույն տեղում, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 607, թ. 54:

[18] **Խատիսյան Ալ.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 183, ՀԱԱ, Ֆ.Պ- 199, ց. 1, գ. 146, թ. 96:

դասալքության դեմ անզիջում պայքար ծավալելու և զինապարտներին զինվորական ծառայության մեջ ներգրավելու ուղղությամբ[19]:

Հայկական բանակի ստեղծման ու ամրապնդման դժվարությունները զգալի չափով պայմանավորված էին նաև նրանով, որ Վրաստանը նրբորեն հարուցում էր մի շարք դժվարություններ՝ դեպի Հայաստան զենք ու զինամթերքի տեղափոխման առումով: Իսկ ամենածանրն այն էր, որ համապատասխան պայմանագրով հայկական կառավարությանը պարտադրվել էր Վրաստանին զիջել նրա տարածքով Հայաստան փոխադրվող զենք ու զինամթերքի շուրջ 27 %-ը[20]: Բացի այդ, վրացական կողմը, խոսքով հավաստիացնելով հայկական բանակի զորակոչին նպաստելու իր պատրաստակամությունը, իրականում խոչընդոտում էր դրան: Այդ են վկայում բազմաթիվ փաստաթղթեր: Այսպես, օրինակ, վրացական իշխանություններն Ախալքալաքի գավառում, որի բնակչության 77 %-ը (կամ 85 հազար մարդ)[21] կազմում էին հայերը, զբաղվում էին զորակոչային տարիքի երիտասարդների ցուցակների ստեղծմամբ՝ ձգտելով նրանցով համալրել վրացական բանակը:[22] Վրաստանի իշխանությունների կողմից նույնպիսի քաղաքականություն էր վարվում նաև Լոռի գավառի նկատմամբ[23]: 1918 թ. սեպտեմբերի վերջերին տեղական իշխանություններին Ն. Ժորդանիայի կառավարության տված հրահանգի համաձայն՝ այդտեղից զորակոչվող հայերը հարկադրաբար պետք է ծառայեին վրացական զորքերում: Վրացական կողմի վերաբերմունքը հրաշալի էր հասկացել Ալ. Խատիսյանը, որը Համո Օհանջանյանին 1920 թ. ապրիլի 7-ին հասցեագրած նամակում գրում էր. «օգնել կարող են գլխավորապես վրացիները և մեր հզորությունը: Իսկ դա նշանակում է ռազմական հանդերձավորում և վրացիների հետ լրիվ մերձեցում: Իսկ դա նշանակում է գնալ տարածքային զիջումների, քանզի վրացիները բարեկամությունը մեր հետ միայն այդպես են հասկանում»[24]:

Նմանատիպ քաղաքականություն էր վարում նաև մյուս հարևանը՝ Ադրբեջանը: Այսպես, Ադրբեջանի իշխանությունները, իրենց հանրապետության անբաժան մաս համարելով Զանգեզուրը, Ղարաբաղը, Նախիջևանը, Շարուրը, Սուրմալուն, Ղազախը, զորակոչից չէին ազատում նաև Ադրբեջանի զանազան վայրերում ապրող տաճկահայերին, ինչպես օրինակ, Գանձակի շրջանի Չարդախլու գյուղում ժամանակավոր բնակություն հաստատածներին[25]: Ադրբեջանական այս և այլ կարգի ոտնձգություններից և պարզապես հակահայկական գործողություններից պատնեշվելու համար Հայաստանի կառավարությունը մի շարք քայլեր ձեռնարկեց: Այսպես, դեռ 1918 թ. նոյեմբերի 16-ին Նախարարների խորհրդի նիստում լսվում է զինվորական նախարարի զեկուցագիրը՝ Ղարաբաղի և

[19] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 199, ց. 1, գ.27, թ. 249-250:
[20] Նույն տեղում, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 498, թ. 768:
[21] Նույն տեղում, Ֆ.Պ- 276, ց. 1, գ. 96, թ. 2:
[22] Նույն տեղում, գ. 62, թ. 84:
[23] Նույն տեղում, գ. 12, թ. 195, գ. 67, թ. 35:
[24] ՀՀ ԳԱԱ Լրաբեր Հասարակական Գիտությունների, 1996, N 3, էջ 198:
[25] Հ ԱԱ, Ֆ .Պ- 278, ց . 1, գ . 32, թ . 95:

Զանգեզուրի համար զինվորական ուժեր կազմակերպելու մասին[26]: 1919 թ. հունիսի 16-ին Նախարարների խորհուրդը որոշում ընդունեց Ղարաբաղի զորամաս կազմակերպելու համար զինվորական նախարարության հաշվին փոխանցել 1,5 միլիոն ռուբլի: Ըստ այդ որոշման՝ Ղարաբաղյան զորամասը պետք է բաղկացած լիներ մեկ հետևակային գումարտակից, երկու լեռնային թնդանոթից և վերջինիս անձնակազմից, ինչպես նաև 54 հետախույզներից[27]:

Հայաստանում գործող կուսակցությունների մեծամասնությունը 1918-19-20 թթ. աջակցում էր ազգային կանոնավոր բանակի ստեղծմանը: Այսպես, սոցիալ-դեմոկրատ Հ. Ազատյանը Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 17-ի նիստում հանդես է գալիս հաշմանդամ զինվորների ապահովության մասին օրինագծի քննարկման կապակցությամբ՝ անելով հիմնավոր առաջարկներ, որոնք հանգում էին թե՛ զինվորների և թե՛ սպաների համար ապահովագրության հավասար պայմանների ստեղծմանը[28]:

Կանոնավոր բանակի ստեղծման նկատմամբ կուսակցությունների դիրքորոշման առումով հետաքրքրական են նաև Հայաստանի խորհրդի հայ ֆրակցիաների 1919 թ. մարտի 16-ի և 19-ի նիստերի նյութերը: Մարտի 16-ի նիստում զեկուցումով հանդես է գալիս վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանը: Նրան ունկնդրում են ՀՀ խորհրդարանի պատգամավորական խմբակցությունների ներկայացուցիչները և իրենց կարծիքը հայտնում երկրին սպառնացող վտանգի ու հայկական զորքերի անմխիթար վիճակի մասին: Նկատի ունենալով, որ Հայաստանի խորհրդի նիստերը կանոնավոր չեն գումարվում, մինչդեռ զորքը վերակազմելու և զորեղացնելու համար կառավարությունը դրամի անմիջական կարիք ունի, նիստը միաձայն որոշում է կառավարությանը թույլ տալ զորական նախահաշվի այլ հոդվածների հաշվին՝ ա) զինվորների սնունդը լավացնել՝ ավելացնելով սննդագրամը, բ) զորային գործը կանոնավորելու համար անհրաժեշտ քանակությամբ ձիեր և ջորիներ գնել, գ) զորային զանազան մասնագիտության աշխատանքների համար ռոճիկով մասնագետ-ծառայողներ պահել[29]: Մարտի 19-ին Ալ. Խատիսյանն առաջարկում է կառավարությանը թույլ տալ՝ ա) զորային նախահաշվի մի հոդվածից մյուսի ծախսերն անել, բ) երկրի սահմաններն անվտանգ դարձնելու համար արտակարգ և համապատասխան միջոցներ ձեռք առնել, գ) այդ նպատակներով կառավարությանը տալ 10 միլիոն ռուբլու վարկ: Ավելին, այս նույն նիստում Ալ. Խատիսյանն առաջարկում է բացառիկ հանգամանքներում Նախարարների խորհրդին տալ համապատասխան միջոցների դիմելու ավելի լայն իրավունքներ՝ վստահեցնելով, որ վերջինս դրանցից կօգտվի միայն բացառիկ հանգամանքներում: Նիստը, քննության առնելով կառավարության առաջարկությունը, ընդունում է Դաշնակցության խմբակցության ներկայացրած հետևյալ բանաձևը. «Երկրի պաշտպանության և զորքի վերակազ-

[26] Նույն տեղում, Ֆ.Պ- 199, ց. 1, գ. 6, թ. 9:
[27] Նույն տեղում, գ. 28, թ. 86:
[28] Նույն տեղում, Ֆ.Պ- 108, ց. 1, գ. 17, թ. 70, 77:
[29] Նույն տեղում, Ֆ.Պ- 199, ց. 1, գ. 27, թ. 149, գ. 72, թ. 123:

մության գործը փութացնելու համար. ա) լիազորել կառավարությանը արտակարգ միջոցներ ձեռք առնել, բ) թույլ տալ կառավարությանը օգտվել զինվորական նախահաշվի գումարներից՝ մի պարագրաֆից մյուսին անցնել, և գ) նոր վարկ բանալ տասն միլիոն ռուբլու (10 մլն ռուբլի) կառավարության անունով նույն նպատակի համար»[30]: Եթե Հայ ժողովրդական կուսակցության խմբակցությունը քվեարկում է այս բանաձևի օգտին, ապա սոցիալ-դեմոկրատական խմբակցությունը, պատճառ բերելով խորհրդարանի շենքում փետրվարի 28-ին տեղի ունեցած միջադեպը՝ կապված տեղական ինքնավարությունների և նրա խորհրդի ընտրությունների նախագծի հետ, հեռանում է նիստից: Սոցիալիստ-հեղափոխականների խմբակցությունն իր հերթին համաձայնվում է դաշնակցության ներկայացրած բանաձևին, պայմանով, որ կա՛մ Ավազների խորհուրդը, կա՛մ խորհրդից ընտրված մի նոր հանձնաժողով հսկի և վարի արտաքին քաղաքականությունը: Սակայն քանի որ սոցիալիստ-հեղափոխականների խմբակցության այս առաջարկը չի ընդունվում, վերջինս ևս հեռանում է ժողովից[31]:

Այդ տարիներին ՀՀ պառլամենտն ուներ համապատասխան զինվորական հանձնաժողով, որը զբաղվում էր բանակաստեղծ գործընթացներով, բանակի ու զինվորական նախարարության համար ֆինանսական-դրամական միջոցների հայթայթմամբ և, ընդհանրապես, անվտանգության համակարգի տարբեր կառույցների ձևավորման աշխատանքներով: Այդ հանձնաժողովի մեջ մտնում էին 8 հոգի՝ Ն. Աղբալյանը, Ս. Վրացյանը, Ա. Բաբալյանը, Ա. Ջամալյանը, Ռ. Տեր-Մինասյանը (նախագահ), Վ. Բաբայանը, բժիշկ Հ. Տեր-Մելիքյանը (քարտուղար) և Ա. Գյուլխանդանյանը[32]:

Կուսակցություններն իրենց յուրահատուկ մոտեցումն ունեին ռազմաքաղաքական բնույթի հարցերի նկատմամբ: Սակայն շատ հաճախ, գործի մեջ իրատեսորեն խորանալու փոխարեն, դրանք նույնիսկ իրենց առողջ մտադրությունները խճողում էին կուսակցական քննադատամոլությամբ, առանց լրջորեն խորանալու կառավարության ու զինվորականության կողմից թույլ տրված բացթողումների, սայթաքումների և չարաշահումների ու այլևայլ բացասական երևույթների իսկական պատճառների մեջ՝ հաշվի չառնելով թե՛ սուր պակասը կադրերի բնագավառում, թե՛ անձուկ աշխարհաքաղաքական միջավայրը և թե՛ զանազան գործոններ՝ կապված Անտանտի գծով Հայաստանի դաշնակիցների կրավորական, թերևս երբեմն էլ ոչ բարեկամական դիրքորոշման հետ, որի պայմաններում արդյունավետ գործելը և մարտունակ ազգային բանակ ստեղծելը դժվարագույն խնդիր էր: Այդուհանդերձ, կուսակցությունները ձգտում էին բանակի կայացմանը, դրանում իշխող անառողջ տրամադրությունների հաղթահարմանը: Օրինակ, 1919 թ. հոկտեմբերին ռամկավարական և Ժողովրդական կուսակցությունների, մենշևիկների ու անկախ սոցիալիստների՝ Ալեքսանդրապոլի կազմակերպությունների, ինչպես նաև Շիրակի գյուղացիների միության վարչության՝ կա-

[30] Նույն տեղում, գ. 27, թ. 150, գ. 72, թ. 194:
[31] Նույն տեղում:
[32] Նույն տեղում, Ֆ.Պ- 198, ց. 1, գ. 32, թ. 10. 12:

ռավարությանն ուղղված մի ուղերձի նախագծում ասվում էր. «Երկրի ինքնապաշտպանության գործը՝ ազգայինի ամենապատասխանատու գործը հանձնված է նույնպես կուսակցական, բայց անձեռնհաս անհատների, դուրս են ձգված արժանավորները միմիայն այն պատճառով, որ գործում է կուսակցական խտրությունը: Նկատելի է, որ փոխանակ ուժեղացնելու կանոնավոր բանակների կազմությունը, ընդհակառակը՝ նորից կենդանանում է խմբապետական կազմերի անկարգ և քայքայող դրությունը»[33]:

Բանակի ու ռազմական քաղաքականության հարցերը կառավարող դաշնակցության կուսակցության ուշադրության կենտրոնում էին: Նրա 9-րդ ընդհանուր ժողովը (1919 թ. սեպտեմբերի 27- նոյեմբերի 2) զորքի մասին հատուկ որոշում կայացրեց: Զորքի մասին Դրոյի զեկուցման հիման վրա համապատասխան որոշում ընդունվեց բոլոր քաղաքացիների պարտադիր երկամյա զինվորական ծառայության, բանակը բոլոր առումներով հայացնելու և հայոց պետության պաշտպանությանը ծառայեցնելու հրամայականի մասին: Բանակի հայացման գործում կարևոր դեր ունեցան հատկապես թուրքական բանակից հարյուրի չափ հայ սպաների ժամանումը և ազգային բանակում ծառայության անցնելը: Մարտունակ և որակյալ բանակ ունենալը կուսակցությունը տեսնում էր մի կողմից հզոր տնտեսության, իսկ մյուս կողմից՝ ռազմիկների բարոյական կայունության և հայրենիքին նվիրվածության մեջ[34]:

Չնայած այն հանգամանքին, որ հայ իրականության մեջ գոյություն ունեցող բոլոր կուսակցությունները վճռորոշ պահերին այս կամ այն կերպ սատարել են կառավարությանը, և իրենց մոտեցման այս կամ այն տարբերությամբ հանդերձ՝ կանգնած էին երկրի ու ազգային պաշտպանության կազմակերպման դիրքերում՝ կողմնակից լինելով ամուր ու կարգապահ բանակի ստեղծմանը, երբեմն ունեցել են անլուրջ, ոչ լիարժեք մոտեցումներ երկրի պաշտպանության և ռազմական ու ներքին շինարարության հարցերին: Ինչպես պարզվում է Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 10-ի նիստի արձանագրությունից, սոցիալ-դեմոկրատական խմբակցությունը պահանջում էր զինվորական նախարարության գործունեության ու ծախսերի հրապարակայնություն: Որպեսզի պարզ դառնա այդ խմբակցության մոտեցման ողջ հակասականությունը և որոշակի իմաստով՝ նաև վնասակարությունը պետական քաղաքականության ըմբռնման տեսանկյունից, մեջբերենք նրանց տեսակետն ամբողջությամբ. «Նկատի ունենալով զինվորական մինիստրության վարած հետադիմական մեծածախս և կործանիչ քաղաքականությունը, նրա անտարբեր և հաճախ հանցավոր վերաբերմունքը դեպի զորքի նյութական և բարոյական պահանջները՝ մանավանդ մահվան պատիժը վերականգնելուն վերաբերող հակաօրինական կարգադրությունը, ինչպես և այդ մինիստրության ամբողջ նախահաշվի գաղտնի հայտարարվելը, սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան առաջարկում է մերժել այդ նախահաշիվը»[35]: Սակայն այս առաջարկը, ընդամենը 3

---

[33] Նույն տեղում, Ֆ.Կ- 4033, ց. 7, գ. 2, թ. 1, գ. 17, թ. 1, Ֆ.Պ- 404, ց. 1, գ. 36, թ. 1:

[34] **Հակոբյան Ա.,** Հ.Յ.Դ. 9-րդ ժողովը, Ե., 1974, էջ 10, 34, 35, 44:

[35] Նույն տեղում, Ֆ.Պ- 198, ց. 1, գ. 15, թ. 58:

ձայն ստանալով, մերժվում է, քանզի տվյալ իրադրությունում նմանատիպ որոշում ընդունելը նշանակում էր վնասել պետության պաշտպանունակությանը և անվտանգության համակարգի ձևավորմանը: Բացի այդ, այս դիրքորոշման միակողմանիությունը և կիսատ-պռատությունն արտահայտվում էր նրանում, որ կառավարությանը և, մասնավորապես, զինվորական նախարարությանն արդարացիորեն քննադատելով ռազմական քաղաքականության բնագավառում թույլ տված զեղծարարությունների ու հափշտակումների, ինչպես նաև բանակի հիմնահարցերի նկատմամբ հանցագործ վերաբերմունքի համար, ընդդիմության ներկայացուցիչներն ընկնում էին մի ծայրահեղությունից մյուսի մեջ՝ զորքերում առկա բացթողումները փորձելով պայմանավորել միայն ՀՀ կառավարության քաղաքականությամբ և ոչ թե սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական բնույթի ավելի բարդ գործոններով: Այդ իսկ պատճառով էլ բանակում առկա բացասական երևույթների առողջ քննադատությունն ուղեկցվում էր բանակի վերակառուցման ու բանակաշինության մասին ընդհանուր բնույթի վերացարկումներով, որոնց համար ցանկության դեպքում միշտ էլ հարմար փաստարկներ կգտնվեին: Այդ է վկայում նույն սոցիալ-դեմոկրատական խմբակցության առաջադրած հետևյալ տեսակետը. «Զինվորական ու երկրի պաշտպանության խնդիրներում բարձրաստիճան ու հասարակ զինվորականության շարքերից մեծաքանակ ավելորդ բերանների վտարումն, բանակի վերակազմություն ժողովրդի տնտեսական ու հասարակական ուժերի համեմատ և ժողովրդական ուժեղ միլիցիա քաղաքներում ու մանավանդ գյուղերում»[36]: Այս և այլ տարաբնույթ փաստերի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ, ընդհանուր առմամբ, ընդդիմությանը հետաքրքրել են հայկական բանակի հիմնախնդիրները, և այդ տեսանկյունից նրա արտահայտած մտքերն ու տեսակետները, անշուշտ, արժանի են ուշադրության: Եվ առհասարակ, այդ ժամանակաշրջանում Հայաստանում գործող քաղաքական ուժերի մեծ մասը իր մոտեցման մեջ հաճախ արդարացիորեն դատապարտում էր այն սխալներն ու սայթաքումները, որոնք թույլ էին տրվում ռազմական շինարարության և անվտանգության համակարգի այս կամ այն օղակի կազմակերպման բնագավառում, մերկացվում էին զեղծարարություններն ու հանցագործությունները հայկական բանակի շինարարության բնագավառում, ինչպես նաև զինվորականության մի մասի շահամոլ անվայելուչ կեցվածքը բանակի հիմնախնդիրների նկատմամբ: Այնուամենայնիվ, չնայած սոցիալ-դեմոկրատական և այլ խմբակցությունների կողմից զինվորական նախարարության և կառավարության հասցեին ուղղված սուր և անաչառ քննադատությունում կային ռացիոնալ հատիկներ, սակայն դա հիմք չէր, որ դրանք առհասարակ ժխտական մոտեցում որդեգրեին բանակաշինության ու անվտանգության համակարգի ձևավորման բնագավառում պետական տարբեր մարմինների ձեռնարկած ամեն մի քայլի նկատմամբ: Քաղաքական-կուսակցական այդ ուժերի մոտեցումներում արժեքավոր և օգտակար առաջարկությունների հետ մեկտեղ կային այնպիսիք, որոնք չէին տեղավորվում մեծաթիվ ուժեղ և կարգապահ բանակ ստեղծելու

[36] Նույն տեղում, Ֆ.Պ- 404, ց. 1, գ. 1, թ. 6:

ծրագրային նպատակադրումների շրջանակներում: Դրանք հանգում էին նրան, որ Հայաստանը, լինելով փոքր և ոչ մեծաքանակ բնակչությամբ երկիր, չպետք է ունենա մարտունակ ուժեղ բանակ ստեղծելու ռազմավարություն: Հետևաբար ՀՀ-ն պետք է բավարարվի փոքրաքանակ զորքով: Այսպես, բանավիճելով զինվորական նախարարության կողմից ներկայացված մասնակի զորացրման նախագծի շուրջ՝ կապված վրաց-հայկական պատերազմի ավարտի և երկրի վիճակի որոշակի կայունացման հետ, խորհրդարանի սոցիալ-դեմոկրատական խմբակցությունը, ի դեմս Հ. Ազատյանի, 1919 թ. հունվարի 7-ի Հայաստանի խորհրդի նիստում հետևյալ տեսակետն է հայտնում. «շատ ավելի լավ է ունենալ 5-6 հազարանոց լավ հագնված ու լավ սնված զորք, քան 16 հազար քաղցած ու տկլոր խուժան»[37]: Սոցիալ-դեմոկրատները գտնում էին, որ հայերը, լինելով փոքր ու աղքատ ժողովուրդ, չեն կարող 40-50 հազարանոց բանակ ունենալ՝ երկրի պաշտպանության և ռազմական շինարարության, ինչպես նաև պետական անվտանգության ապահովման խնդիրները լուծելու համար[38]: Եվ, որպես արդյունք, սոցիալ-դեմոկրատներն այս հիմնախնդիրների լուծման խնդրում ավելի անհաջող միջոց էին առաջարկում, քան Դաշնակցություն կուսակցությունը: Սոցիալ-դեմոկրատական խմբակցության ներկայացուցիչները, առանց լուրջ հիմնավորման և համապատասխան հաշվարկներ կատարելու, պնդում էին, թե զորքը պետք է լինի ժողովրդական միլիցիայի տեսքով, քանի որ մոտ ապագայում Հայաստանին որևիցե թշնամի չի սպառնում, ինչը մոլորություն էր, իսկ առհասարակ ազգային-պետական քաղաքականության տեսանկյունից՝ խիստ վնասակար[39]: Այդուհանդերձ, պատերազմի, ռազմական ծախսերի և այլնի նկատմամբ կուսակցությունների մոտեցումն արժանի է ուշադրության: Այս առումով հետաքրքրական է նաև Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 10-ի նիստում կայացած քննարկումը՝ կապված զինվորական նախարարության նախահաշվին 29 մլն ռուբլու չափով գումար հատկացնելու հետ: Այդ կապակցությամբ ելույթ ունեցած Հ. Ազատյանը պնդում էր, որ նախարարությունը վարել է անպատասխանատու քաղաքականություն, և բերում էր փաստական տվյալներ՝ այդ գումարի աննպատակ օգտագործման մասին: Նա նաև պնդում էր, որ կան բազմաթիվ բողոքներ, որ զինվորներն ամիսներով ռոճիկ չեն ստանում, վատ են կերակրվում և այլն[40]: Սակայն սոցիալ-դեմոկրատների և նրանց որոշակի իմաստով ձայնակցած սոցիալիստ-հեղափոխականների խմբակցությունների առաջարկը չի անցնում, ձայների մեծամասնությամբ անցնում է Հայ Հեղափոխական Դաշնակցության բանաձևը:

Հայկական բանակի ստեղծման և այդ ուղղությամբ ՀՀ կառավարության գործունեության վրա բացասաբար ազդեցին նաև Հայաստանի անտանտյան դաշնակիցների երկդիմի քաղաքականությունը և վնասակար ու աղետալի հետևանքներ ունեցող քայլերը, որոնց դեմ բողոքում էին երկրի բոլոր քաղաքական կուսակցու-

---

[37] Կայծ, 30. I 1919:

[38] Նույն տեղում:

[39] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 276, ց. 1, գ. 158, թ. 4:

[40] Կայծ, 18. XII. 1918, 1. II. 1919:

թյունները: Այսպես, սոցիալիստ-հեղափոխական խմբակցության ներկայացուցիչ պատգամավոր Վ. Մինախորյանը, ելույթ ունենալով Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 25-ի նիստում, ընդգծում է հետևյալը. «ոչ միայն հարևաններն են ուզում մեզ ոչնչացնել, այլև նույնն է անում Անգլիան: Կարելի է ասել, որ մեր դժբախտությունների 99 տոկոսի պատասխանատվությունը դաշնակիցների վրա է ընկնում: Այսօր միակ գործնական քայլը մեր պարլամենտի կողմից պիտի լինի այն, որ մենք ցույց տանք, թե դաշնակիցների այդ բոլոր խաբեբայությունները մենք զգում և հասկանում ենք»[41]: Այդպիսի մի շատ ուշագրավ վկայություն էլ մենք հանդիպում ենք Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին 1919 թ. սեպտեմբերի 1-ին Հայաստանի պառլամենտի քարտուղար Հ. Տեր-Հակոբյանի ուղարկած հաղորդագրությունում, ուր ասվում էր. «Փարիզի մեր պատվիրակության գրություններից պարզվում է, որ անգլիացիք Կովկասում իրենց ներկայության ամբողջ ընթացքում եղել են ոչ անկեղծ դեպի մեզ ու վարել սիստեմատիկաբար մուսուլմանական քաղաքականություն: Անգլիան ամեն տեղ, ինչպես և Կովկասում վարում է քողարկված մուսուլմանական քաղաքականություն»[42]: 1919 թ. ապրիլի 30-ին Հայաստանի կառավարության նախագահ Ալ. Խատիսյանն Արևելքում անգլիական գլխավոր հրամանատար Միլնի հետ զրույցի ժամանակ բողոքում է անգլիացիների կողմից Կարսից ռազմական ունեցվածքի, զենքի, հագուստների և այլնի դուրսբերման դեմ՝ պահանջելով դադարեցնել այն: Դրան Միլնը պատասխանում է, որ նախ 1) իբր թե պատերազմն ավարտվել է, կարիք չկա ուժեղացնելու բանակը, որ 4 տարի պատերազմել են ոչ թե նրա համար, որ ուժեղացնեն բանակը. բավական է ունենալ ոչ թե զորքեր, այլ լավ ժանդարմերիա. 2) որ Կարսում ամեն ինչից շատ կա, հատկապես հագուստ, և եթե անգլիացիներն այնտեղից դուրս են բերել հրետանին և փամփուշտները, ապա ուղարկել են գեներալ Դենիկինին, քանզի նա կռվում է բոլշևիկների դեմ, որոնց անգլիացիները համարում են լուրջ թշնամիներ նաև Հայաստանի համար[43]: Ինչպես տեսնում ենք, անգլիական գեներալի տեսակետը չէր բխում իրերի իրական վիճակից: Այն հաշվի չէր առնում, որ թշնամական երկրներով շրջապատված Հայաստանին իր առջև կանգնած խնդիրները լուծելու համար ոչ թե ոստիկանություն էր անհրաժեշտ, այլ լավ զինված ու հանդերձավորված մարտունակ բանակ, որը կկարողանար ապահովել Հայաստանի Հանրապետության անվտանգությունը: Միանգամայն ակնհայտ է, որ անգլիացիների քաղաքականությունը հարմարեցվում էր Մեծ Բրիտանիայի նեղ մեծապետական շահերին, ինչը հղի էր կործանարար հետևանքներով՝ Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անվտանգության ապահովման տեսանկյունից: Բրիտանական զինվորական իշխանությունների կողմից Կարսից 60 հրանոթների և մեծ քանակությամբ արկերի ու փամփուշտների, ավտոմոբիլային սարքավորման, բամբակի և այլ գույքի դուրսբերման փաստը վատ տպավորություն էր թողնում նաև այն առումով, որ այդ

[41] ՀԱԱ, Ֆ.Պ- 198, ց. 1, գ. 15, թ. 89:
[42] Նույն տեղում, Ֆ.Պ- 276, ց. 1, գ. 97, թ. 126:
[43] Նույն տեղում, գ. 101, թ. 48, գ. 114, թ. 196:

ամենը, բացի Դենիկինից, գուցե հասցեագրված էր նաև ադրբեջանցիներին: Այդ առթիվ Մ. Սիլիկյանի զեկուցագրի հիման վրա Թ. Նազարբեկյանը և շտաբի պետ, գեներալ-մայոր Հ. Հախվերդյանը 1919 թ. մայիսի 2-ին զինվորական նախարար Ք. Արարատյանին հայտնում էին հետևյալը. «Այդ բոլորը զորքի և ժողովրդի վրա թողնում են ճնշող տպավորություն, առավել ևս, որ այդ գույքը ուղարկվում է Բաքու, որը կարող է ընկնել Ադրբեջանի կառավարության ձեռքը»[44]: Այս իրողության հաստատումն ակնհայտ երևում է Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան Թեքինսկու՝ 1919 թ. մայիսի 10-ին իր կառավարության նախագահ Խան Խոյսկուն հղած հեռագրից. «Պատրվակով, թե բոլշևիկները սպառնում են Բաքվին, խնդրեք անգլիացիներին՝ Կարսից թնդանոթները տեղափոխել Բաքու»[45]: Ասվածի հաշվառմամբ շատ հավանական է, որ 1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսված թուրք-հայկական ծանր և կործանարար ռազմաքաղաքական հետևանքներ ունեցող պատերազմում Հայաստանի Հանրապետության պարտության և, մասնավորապես, Կարսի անկման գլխավոր պատճառներից մեկը անգլիական ռազմական ներկայացուցիչների ձեռնարկած հակահայկական գործողություններն էին: Այդ իսկ պատճառով էլ անգլիական գեներալ Քորիի հետ հայկական կառավարության 1919 թ. հունիսի 7-ի տեսակցության ժամանակ Ալ. Խատիսյանը պահանջում է կարգադրել դադարեցնելու Կարսից զինվորական ունեցվածքի ապօրինի դուրսբերումը, քանի որ այն ՀՀ սեփականությունն է: Իր հերթին, վերը նշված փաստերը հիմք ընդունելով, գեներալ Մ. Սիլիկյանը կարգադրել էր կասեցնել անգլիացիների գնացքի երթևեկությունը, ինչն էլ գեներալ Վ. Թոմփսոնը օգտագործեց որպես պատրվակ՝ արդարացնելու ռազմական ունեցվածքի դուրսբերումը Կարսի բերդից[46]: Այս հակահայկական գործողությունների դեմ բողոքեցին Հայաստանի խորհուրդը, նրա կուսակցական խմբակցությունները և կառավարությունը, սակայն էական արդյունքներ ձեռք բերել չհաջողվեց:

Այդուհանդերձ, կուսակցությունները հայ ժողովրդի համար ճակատագրական պահերին միշտ էլ զորավիգ են եղել հայրենիքին և պետությանը: 1920 թ. թուրք-հայկական աղետալի պատերազմի ժամանակ, երբ Հայաստանի Հանրապետությունը լքեցին սևրյան դաշնակիցները և Ազգերի լիգայի երկրները, Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը և մյուս կուսակցությունները միասին հանդես եկան հայրենիքի պաշտպանության և ոսոխին արժանի հակահարված տալու վճռականությամբ: Նրանք պատրաստակամություն հայտնեցին աջակցելու կառավարությանը և ըստ կարելվույն օգնելու ռազմաճակատում մարտնչող մեր զորամասերին: ՀՍԴԲԿ կենտկոմը հրապարակեց հայ ժողովրդին ուղղված կոչ՝ անարգ թշնամուն հակահարված տալու և հայրենիքը պաշտպանելու վերաբերյալ[47]: 1920 թ. հոկտեմբերի 26-ին Երևանում կայացած միջկուսակցական

[44] Նույն տեղում, Ֆ.Պ- 276, ց. 1, գ. 158, թ. 4:
[45] Նույն տեղում, Ֆ.Պ- 200, ց. 1, գ. 299, թ. 7:
[46] Նույն տեղում, Ֆ.Պ- 276, ց. 1, գ. 114, թ. 196:
[47] Հառաջ, 3. X. 1920:

միտինգում կրակոտ ճառով հանդես եկավ Բ. Իշխանյանը՝ ընդգծելով երկրին սպառնացող վտանգն ու հայրենիքը պաշտպանելու անհրաժեշտությունը[48]: Հայրենիքի համար այդ ծանր պահին բոլոր խորհրդարանական խմբակցությունները կանգնեցին կառավարության կողքին: Ընդունվեց կառավարությանը համակրանքի բանաձև, որը վերջինիս լիազորում էր իրականացնելու լիարժեք զորակոչ: Այսպիսով, հայ քաղաքական կուսակցություններին միշտ էլ մտահոգել են ռազմական քաղաքականության ցավոտ հարցերը:

ПРОБЛЕМЫ АРМЯНСКОЙ АРМИИ В 1918-1920 гг.

ВИРАБЯН В. Г.

Резюме

В годы Первой Республики армянское правительство и партии предприняли конкретные шаги в деле организации и усиления основ нового, армянского государства–армии и иных военных структур. Различные архивные документы свидетельствуют о том, что в основном политические партии и их парламентские фракции не только поддерживали, но и помогали правительству Республики Армения в вопросах организации армии и военного строительства. И несмотря на отдельные перегибы и ошибки, правительство и партии смогли решить некоторые армейские проблемы, внеся посильный вклад в дело разрешения важнейших государственных проблем, коренным образом связанных с созданием эффективной и надёжной системы безопасности Первой Республики Армения.

[48] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 198, ց. 1, գ. 74, թ. 2: